

ուազ մոմ են վառում, այրի անցքով երկը անզամ անցնում, որ երեխայ ունենան: Նոյն անցքով անց են կացնում նաև այն երեխուաներին, որոնք ժամանակին ոտք չեն ելնում:

Վարդարբնուրից ոչ հեռու Ս. Սարգիս ուխտատեղու մօտ գետնից րզմող մի աղբիւր կայ, որ Կաթնաղբիւր է կոչւում. Կաթ շանեցող կանայք ուխտ են գալիս այստեղ, մոմ վառում, ջրից իրենց ստինքներին քսում, որպէսզի կաթ ունենան:

Երբ «քողոն» կոչուած միջատը ծծում է ցորենի հասկի հիւթը, զիւղացիները մի քանի ամուրի այր մարդիկ են ուղարկում «քողոնի ջուր» բերելու. Սա գտնուում է Զարդախլու զաւառում մի այրի մէջ. մի վճիտ աղբիւր է, որ «զոյացել է այրի առաջ թաղուած ճպնաւորի արցունքներից», Անխօս մօտենալով աղբիւրին, մօմեր են վառում. երկրագում և ջրից վերցնելով վերագտառնում, զգուշանալով, որ ջրի սրուակը զետնին չը գնեն, այլ շարունակ իրանց վրայ պահեն, նոյն իսկ քննչին: Թուրը բերում, դարձեալ անխօս մտնում են եկեղեցի, զնում սեղանին և ապա քահանան վերցնում է այդ և բոլոր զիւղականների հետ շրջում արտերը, անդաստան կտարում և ջուրը սրուեալ արտերին. Խոկոյն «այդ բոլոնները կոտորում և կամ թռչում հեռանում են»:

Երբ մորելին է կտարում արտերը, նոյն ձեռվ զնում Մասկոյի վրայից Ս. Յակոբայ աղբիւրի ջրիցն են բերում և անդաստան կտարելով սրուեալ արտերին. Խոկոյն երեւում են սկ Ժնո կոշտած թռչունները, որոնք կոտորում են մորելիներին:

#### ԿՐԱԿԻ ՊԱՀՑԱՄՈՒՆՔ.

Կրակապաշտութեան իրը մնացորդ կարելի է յիշատակել հետեւաները.

1) Տարեմտին մի ահազին գերան են դնում օջախի մէջ, որ անշէջ վառում է մինչև Քրիստոսի ծննդեան օրը, և այս զերանի խանձորները թաղում արտերում, որ կարկուտ չը

իսկի, և այլն ինչպէս մանրամասն զբել եմ «Նոր—տարի» նկարագրութեան մէջ.

2) Կրակով երդւում են:

3) Կրակի վրայ ջուր չեն ածում: Բայց երբ բացօթեայ տեղումն են կրակ անում, որպէսովի արգիլին սառանաներին կրակից տանելու՝ վերան խաշակնքուելով ջուր են շաղ տալիս:

3) Կրակին չեն խփում, վերան չեն թքում, վրայից չեն անցնում, մեծ մեզը համբարելով այդ բոլորը:

4) Դիշերները կրակ դուրս չեն տալիս:

5) Հաւատալով, որ կրակը կարող է շարերին հալածել, անթեղ անելիս խանձողի կոմքը դէպի զուռն են ուղղում, որպէսզի շարը ներս մտնելիս դէպի նա գայ և հալածուի:

6) Եվէ փայտը վառուելիս ձայն է հանում, ասում են, թէ իրենց բամբասում են:

7) Կրակին համահաւասար յարգանք մատուցում է և կրակարաններին—օջախին ու թռնրին: Մրանցով ևս երդւում են, սրանցով անիծում, թռնրի վրայ պատկ և կնունք կատարում, մեռոնաջուրը սրանց մէջ ածում, հարսանիքին նորապըսակները համբուրում են օջախը, տղաբերը շատ անդամ օջախի մօտն է կատարում: Նոր տուն շինելիս առաջին անգամ հին տան օջախից են վերցնում կրակը տան ամենամեծ անդամի ձեռից և տանում վառում: Նոր հաւ, հորիծ, գառն գնելիս՝ մօտեցնում են օջախին և ոտների վրայ ջուր ածում:

Արևապաշտութեան, հետևապէս և կրակապաշտութեան մնացորդ է և այն, որ ծննդաբնարութիւնից յետոյ տատմայրը նորածնին դիրին առած և ձեռքին ծայրը մի սոխ անցկացրած շամփուր բռնած գուրս է գալիս՝ զառնում դէպի արեգակը և աղօթում: «Սուրբ բեգնակ, Հս երեխի փայլ տաս, երկնքիցը ցող ցողայ, գեանիցը պտուղ ստանայ»\*).

\* ) Տես «Ճգաբերք և կնունք» գլուխում.